ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ *

Էդգար Քալանթարյան

Բանալի բառեր՝ *Հանրային կառավարման համակարգ, արդյունավետ կառավարում, պետական կառավարում, բարեփոխում, կառավարում, օրենսդրական դաշտ, քաղաքացիական ծառայություն, հակակոռուպցիոն համակարգ:*

20-րդ դարի սկզբում մշակված Վեբերյան և Վիլսոնյան դասական հանրային կառավարման համակարգերին 1970-ականներից փոխարինելու եկավ Նոր հանրային կառավարման տեսությունը: 21-րդ դարասկզբին արդեն ակնհայտ էր, որ տեխնոլոգիական առաջընթացը, տնտեսական, քաղաքական և սոցիալական փոփոխությունները պետական կառավարման համակարգի որոշակի կամ արմատական փոխակերպման հիմք հանդիսացան: Սկզբնական շրջանում որպես տեսություն մշակվեց, իսկ այնուհետև նաև պրակտիկայում սկսվեց կիրառվել համալիր գործողությունների համակարգ, ինչն ընդունված է անվանել հանրային կառավարման համակարգի օպտիմալացում:

Անկախացումից հետո ՀՀ նորընտիր կառավարության խնդիրներից մեկը հանրային կառավարման արդիականացումն էր. պետք էր ԽՍՀՄ-ից ժառանգություն ստացած հսկայածավալ խորհրդային ինստիտուտներից և կառավարման մարմիններից անցում կատարել ավելի արդյունավետ կառավարման համակարգի և շուկայական տնտեսության: Անցումային փուլում գտնվող երկրների համար, կարևոր է, որ պետության դերը վերաիմաստավորվի և ուժեղացվի նրա ներուժը: Նոր պայմաններում պետության արդյունավետ կառավարման համար հարկավոր է իրականացնել բարեփոխումների համալիր ծրագիր: Հանրային կառավարման ոլորտի բարեփոխումները բարդ են, որոշ դեպքերում՝ ոչ պոպուլյար, վիճելի, ռիսկային և պահանջում են երկար ժամանակ՝ արդյունքներ արձանագրելու համար: Դրանք կարող են աջակցություն ստանալ կամ չստանալ բնակչության կողմից, կարող են դժվար լինել իրականացման համար, հանգեցնել հետագա վերափոխումների անհրաժեշտության կամ ուղղակիորեն չաշխատել՝ վտանգի տակ դնելով հանրային կառավարման մարմինների գոյությունը և լեգիտիմությունը:

Բարեփոխումների հիմնական նպատակը պետական կառավարման մարմինների կողմից պետական ծառայությունների մատուցման որակի և մատչելիության բարձրացումն է, դրանց վարչական կառավարման կառուցվածքային մոդելների մշակումը, քաղաքացիական ծառայության համակարգի ստեղծումը և զարգացումը, որոշումների ընդունման համատեքստում քաղաքացիական հասարակության մասնակցության խթանումը, պետական կառավարման մարմինների գործունեության հրապարակայնության և թափանցիկության ապահովումը և այլն: Պետական կառավարման բարեփոխման համար անհրաժեշտ է երկրի ներուժի վերակառուցում՝ մարդկանց ընկալման փոփոխություն, պետական կառավարման մարմինների լիազորությունների հստակեցում և գործունեության որակի բարձրացում և այլն:

---

* Հոդվածն ընդունվել է 27.09.19:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ, ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեռյանը: 28.10.19

ՀՀ պետական կառավարման համակարգի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, կառավարման կառուցվածքը կատարելագործելու, կառավարման ապարատի աշխատողների թիվն օպտիմալացնելու, աշխատանքի վարձատրության համակարգը բարելավելու նպատակով 1999թ. ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվեց ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովը [1], որը հանրապետությունում պետական կառավարման համակարգի բարեփոխումների գործընթացի իրականացմանը ձեռնամուխ եղավ նախարարությունների, գերատեսչությունների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) վերակառուցման միջոցով: Իսկ արդեն 2000թ. մարտին, ՀՀ վարչապետի կողմից հաստատվեց ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների առաջնահերթ միջոցառումների ցանկը և հանձնաժողովի աշխատանքային խմբերի համար սահմանվեցին կոնկրետ միջոցառումներ, որոնք հիմք հանդիսացան հետագա աշխատանքների պլանավորման ու կազմակերպման համար [2]: Պետական կառավարման համակարգում աշխատողների որակավորման բարձրացման և որոշումների նախապատրաստման, ընդունման ու իրականացման համար կառավարության որոշմամբ ներդրվեց էլեկտրոնային կառավարման համակարգը, որի նպատակն էր նախարարությունների կողմից տարեկան աշխատանքային ծրագրերի մշակումը և գործառույթների ընթացակարգերի նկարագրումը, ներքին հսկողության համակարգի գործունակության բարձրացումը [3]: Այս գործընթացը ՀՀ պետական կառավարման համակարգում դեռ կատարելագործման փուլում է՝ չնայած մինչ այսօր գրանցած ահռելի հաջողություններին, որոնք էականորեն փոխել են կառավարման կառուցակարգերի ընդհանուր գործունեությունը՝ մեծացնելով հասարակության վստահության մակարդակը պետության կողմից մատուցվող ծառայությունների հանդեպ:

Պայմանականորեն ՀՀ հանրային ոլորտի բարեփոխումները կարելի է բաժանել 4 փուլի:

1. (1999-2003թթ.) - այս փուլի ընթացքում վերակառուցվեց պետական կառավարման վարչական համակարգը, միասնականացվեցին կառավարման կառուցվածքները, ձևավորվեցին կառավարչական հիմնարկներ, ստեղծվեց ըստ արժանիքների պրոֆեսիոնալ քաղաքացիական ծառայություն,
2. (2003-2008թթ.) - այս փուլի հիմնական նպատակն էր պետական ծառայության պատասխանատվության, հաշվետվողականության, ծառայությունների մատուցման, կառավարման մոդելների և մեխանիզմների բարելավումը, քաղաքական որոշումների կայացման գործընթացին քաղաքացիական հասարակության մասնակցության, հասարակության հետ կապի արդյունավետ և թափանցիկ գործունեության համակարգի զարգացումը,
3. (2009-2014թթ.) - այս փուլն ընդգրկող ժամանակահատվածում՝ 2009 թվականի մայիսին, մեկնարկեց Արևելյան գործընկերության ծրագիրը, որի հիմնական նպատակն էր ամրապնդել Հայաստանի և ԵՄ երկրների միջև հարաբերությունները՝ հավատարիմ մնալով ժողովրդավարության և արդյունավետ կառավարման սկզբունքներին: Արևելյան գործընկերության շրջանակներում ստեղծվեց Հանրային կառավարման բարեփոխումների հանձնախումբը: 2009-2014 թթ. ընթացքում կարևոր ձեռքբերում էր ՀՀ բոլոր մարզերի, նախարարությունների և գրեթե բոլոր համայնքների կողմից «Մայբերրի» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի գործածումը, որը հնարավորություն է տալիս առցանց հետևելու պետական կառավարման մարմիններին ուղղված դիմումների ընթացքին:
4. (2015թ. – ցայսօր) - այս փուլը պայմանականորեն ընդգրկում է 2015 թ. -ի Սահմանադրական բարեփոխումներից հետո հանձնառված հանրային կառավարման բարեփոխումները մինչև մեր օրեր և ՀՀ ներկայիս կառավարության ծրագիրը [4]:

ՀՀ-ում պետական կառավարման համակարգի բարեփոխումների մասին խոսելիս պետք է արձանագրել նաև պետական ծառայության օրենսդրական դաշտի բարելավման փաստը, որի հիմքերը դրվել էին դեռևս 1994թ-ից: 1997թ-ին պատրաստվել էր պետական ծառայության քաղաքացիական ծառայության հայեցակարգը: 1998թ-ին մշակվեց ՀՀ քաղաքացիական ծառայության մասին օրենքի նախագիծը: Իսկ 2001թ դեկտեմբերի 4-ին ընդունվեց ՀՀ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքը, որը կարգավորում է պետական ծառայության մաս կազմող քաղաքացիական ծառայության համակարգը և գործառույթները: Օրենքի նպատակն էր բարելավել ինչպես պետական մարմինների, այնպես էլ պետական ծառայողների ընտրության կարգը, պաշտոնի նշանակման և ազատման ընթացակարգերը, գործունեությունը և այլն: Պետական կառավարման համակարգի բարեփոխման համար ստեղծվեց մի մարմին, որը վերահսկում էր պետական ծառայողների գործունեությունը: Այդ մարմինը ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդն է, որը գործում է 2001թ-ի դեկտեմբերի 4-ից ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված և 2002թ-ի հունվարի 9-ից ուժի մեջ մտած «Քաղաքացիական ծառայության մասին»՝ ՀՀ օրենքի հիման վրա: Խորհուրդը ստեղծվել է պետական կառավարման համակարգի բարեփոխումների և հակակոռուպցիոն քաղաքականության արդյունքում արդյունավետ, միասնական կադրային քաղաքականություն իրականացնելու, պետական ապարատը քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից անկախ արհեստավարժ, բարոյական բարձր հատկանիշներով օժտված կադրերով համալրելու, քաղաքացիական ծառայողների իրավական պաշտպանվածությունը և օրինական շահերը պաշտպանելու նպատակով: 2018 թ-ից այս մարմնի գործառույթները վերածևակերպվեցին, և այսօր գրեթե նույն գործառույթներով այն գործում է ՀՀ վարչապետին առընթեր: Պետական կառավարման արդիականացումն ուղիղ կապված է նմանատիպ կառույցի արդյունավետ գործունեությամբ, որը հնարավորություն է ստեղծում պետական կառավարման համակարգ ներթափանցելու բանիմաց, կրթված, արհեստավարժ մասնագետների, որոնք էլ կարող են երաշխավորել առավել արդյունավետ կառավարում:

Պետական կառավարման բարեփոխման հիմնական առաքելություններից մեկը հակակոռուպցիոն համակարգի ստեղծումն է: 2008-2012թթ ՀՀ կառավարությունը մշակել է հակակոռուպցիոն մի համակարգ [5], որը, տարիների ընթացքում ենթարկվելով բարեփոխման, այսօր առավել արդյունավետ կառուցակարգերով է իրականացնում իր գործունեությունը՝ նպաստելով ՀՀ-ում ժողովրդավարական կառավարմանը: Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա գործողությունների իրականացման ծրագրով նախատեսված 2012 թվականի թիրախների վերջնական և միջանկյալ արդյունքները համապատասխանում էին 2007 թվականի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների կառավարությունների արդյունավետության ցուցանիշներին [6]:

Հանրային կառավարման մարմինների արդյունավետության, թափանցիկության և հաշվետվողականության ապահովումը նույնպես կարևոր է կոռուպցիայի դեմ պայքարում: Դա նշանակում է տարբեր պետական մարմինների գործառույթների տարանջատում, մասնավորապես՝ դրանց բարելավում, պետական մարմինների աշխատակիցների համար պրոֆեսիոնալ չափանիշների սահմանում, անձնակազմի կարողությունների զարգացում, աշխատակիցների արդյունավետության գնահատման համակարգի ներդրում, պետական ծառայողների սոցիալական ապահովագրության համակարգի բարելավում, պետական և համայնքային ծառայողների վարքագծի կանոնակարգերի և շահերի բախման օրենսդրական կարգավորում ինչպես նաև հանրային ծառայության որակի չափանիշների ներդրում և այլն: Չափազանց կարևոր է, որ այս ամենը համապատասխանի միջազգային չափանիշներին և լավագույն փորձին, որտեղ առավել մեծ ուշադրություն է դարձվում հանրային ծառայությունների որակի բավարարման մակարդակին, պետական մարմինների գործառույթները վերահսկող ընթացակարգերին,

ինչպես նաև այդ մարմինների միջև համագործակցության և արդյունավետ հաղորդակցության ապահովմանը:

Պետք է նշել, որ 2008թ-ից ՀՀ-ում հանրային կառավարման ոլորտի բարեփոխումների մեկ միասնական ծրագիր չի իրականացվել: Կատարվել են երկարաժամկետ ծրագրեր, որտեղ տարբեր բաժիններում ներառված են եղել նաև հանրային կառավարման ոլորտի բարեփոխումները: Մասնավորապես 2008թ. ՀՀ կառավարության հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշմամբ հաստատվեց «Կայուն զարգացման ծրագիրը», որի 10-րդ բաժինը վերաբերում է հանրային կառավարման և դատաիրավական համակարգի բարեփոխումներին: Բաժնում հիմնականում նկարագրվում են հանրային կառավարման ոլորտի իրավիճակը ՀՀ-ում մինչ 2008թ-ը և հանրային կառավարման այն հիմնական ոլորտները, որոնց շրջանակներում պետք է իրականացվեին բարեփոխումները: Օրինակ՝

- *էլեկտրոնային կառավարման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, տվյալների միասնական բազաների ու փոխանակման հնարավորությունների ստեղծում,*
- *կառավարության աշխատակազմի և նախարարությունների միջև կապի ուժեղացում՝ գործառույթների առավել հստակ կոորդինացման և համակարգման նպատակով,*
- *պետական կառավարման մարմինների գործունեության հրապարակայնության և թափանցիկության ընդլայնում, որոշումների ընդունման գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովում [7]:*

ՀՀ-ում կառավարման համակարգի բարեփոխումները պետք է իրականացված լինեին մինչ 2012 թվականը, իսկ համակարգը բնութագրող ցուցանիշները պետք է գերազանցեին Արևելյան Եվրոպայի և Բալթյան երկրների 2006 թվականի մակարդակը, սակայն ֆինանսատնտեսական ճգնաժամը և դրա բացասական հետևանքները բավարար հնարավորություն և միջոցներ չապահովեցին ամբողջովին և լիարժեք իրագործելու հանրային կառավարման բարեփոխումների հիմնական կետերը:

ՀՀ հանրային կառավարման բարեփոխումների նոր փուլը սկիզբ դրվեց 2014 թ. ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից՝ «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ» մշակելով, որն էլ հիմք հանդիսացավ 2015 թ. խորհրդարանական կառավարման ձևի որդեգրման համար [8]: Հանրային կառավարման բարեփոխումների նոր փուլի մեկնարկը (2014թ. մարտի 27-ի ՀՀ կառավարության N 442 - Ն որոշում), հիմք հանդիսացավ «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի» (այսուհետ՝ ՀԶՌԾ) հաստատման համար [9]: Ծրագրի 10-րդ գլուխը վերաբերում է հանրային կառավարման ոլորտի բարեփոխումներին, որտեղ ուսումնասիրվել են կառավարման համակարգը համալիր գնահատող համապատասխան ցուցանիշներ՝ նախորդ տարիների վերլուծությամբ, այնուհետև ընդգծվում է մինչև 2025 թ-ի տեսլականը: Այս փաստաթղթում ուղենշվում են նաև հանրային կառավարման համակարգի հիմնական ենթաոլորտների զարգացման այն ռազմավարական գերակայությունները, որոնց միջոցով նախատեսվում է ապահովել առավել արդյունավետ և «լավ կառավարման» համակարգեր: Այսպես՝ կառավարման համակարգի գործառութային բարեփոխումներից առավել ուշադրություն է դարձվում էլեկտրոնային կառավարման համակարգերի կատարելագործմանը, ինչպես նաև տեսչական կառույցների օպտիմալացման գործընթացներին: ՀՀ էլեկտրոնային կառավարման ոլորտում վերջին տարիներին իրականացվել են բազմաթիվ ծրագրեր, մասնավորապես՝

- *ներդրվել են էլեկտրոնային վիզաներ և ARCA էլեկտրոնային վճարումների համակարգեր,*

- *պետական կառավարման համակարգը անցում է կատարել «Mulberry» փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային կառավարման համակարգին,*
- *բիզնեսի և քաղաքացիների համար հնարավորություն է ստեղծվել էլեկտրոնային համակարգով հետևելու էլեկտրոնային ստորագրության, փաստաթղթի և դիմումի ընթացքին,*
- *ստեղծվել է հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ,*
- *ներդրվել են էլեկտրոնային թույլտվությունների և լիցենզիաների, էլեկտրոնային գնումների, բիզնեսի էլեկտրոնային գրանցման, նույնականացման քարտերի (ID-cards) և կենսաչափական անձնագրերի համակարգեր,*
- *ստեղծվել են մտավոր սեփականության գործակալության էլեկտրոնային հայտերի ընդունման ու որոնման, անշարժ գույքի կադաստրի էլեկտրոնային համակարգեր,*
- *ներդրվել են ԴԱՀԿ էլեկտրոնային աճուրդի և դատական տեղեկատվական էլեկտրոնային համակարգեր,*
- *ստեղծվել են համացանցի միջոցով հրապարակային ծանուցման պաշտոնական կայքեր և այլն:*

Պետական կառավարումն արդիականացնելու և բարելավելու նպատակով ՀԶՈԾ-ն կոչ է անում նաև ամրապնդել պետական ֆինանսների կառավարումը, բարեփոխել պետական տեսչական համակարգը, ընդլայնել տեղական ինքնակառավարման մարմինների զարգացումը, բարելավել քաղաքացիական ծառայությունը և դատական համակարգը, նվազեցնել կոռուպցիան: Մասնավորապես՝ լիովին անցնել ծրագրային բյուջետավորման, ներդնել ներքին ֆինանսական հսկողություն բոլոր պետական մարմինների համար, ստեղծել միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգ ներքին աուդիտի համար, ներդնել պետական ներդրումների մանրամասն գնահատման համակարգ, ստեղծել միասնական ռեգիստր հանրային ոչ ընթացիկ ակտիվների համար, միավորել համայնքները, ուժեղացնել տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունները, և քաղաքացիական ծառայողների աշխատավարձերը ավելացնել տարեկան առնվազն 10% -ով՝ 2014 թ-ից սկսած:

Հանրային կառավարման բարեփոխումների նոր փուլում պետք է առանձնացնել կոռուպցիայի դեմ նորովի պայքարը, մասնավորապես ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 10-ի որոշումը՝ հավանություն տալու «Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի» հայեցակարգին [10], ինչպես նաև ՀՀ Կառավարության 2015 թվականի սեպտեմբերի որոշումը «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» [11], որտեղ կարևորվել են օրինականության, թափանցիկության, արդյունավետության, մասնակցային կառավարման, կոռուպցիայի դեմ պայքարող մարմինների նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելու դրույթները:

Համաձայն ՀՀ կառավարության 2016 թվականի ծրագրի՝ պետական կառավարման համակարգի բարեփոխումները ենթադրում էին պետական կառավարման համակարգի օպտիմալացում, որի շրջանակներում նախատեսվում էր պետական կառավարման մարմինների կողմից քաղաքացիներին և տնտեսվարող սուբյեկտներին կոռուպցիայից զերծ ծառայությունների մատուցում, թափանցիկության և հաշվետվողականության բարձրացում, ծառայությունների որակի բարձրացման համար «մեկ պատուհանի» սկզբունքով մատուցվող ծառայությունների համակարգի ընդլայնում, հանրային ծառայողների պարտականությունների կատարման և մասնագիտական ունակությունների գնահատման նոր չափանիշների ներդրում և մի շարք այլ ոլորտային միջոցառումներ[12]:

Կարևորվում էր նաև էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացումը, մասնավորապես նախատեսվում էր 2017 թվականին պետական և տեղական ՏՀՏ-ի համակարգերի փոխգործելիության պլատֆորմի ներդրման սկիզբը՝ ուղղված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգերում տեղեկատվության մեկանգամյա մուտքագրմանը և դրա հասանելիության ապահովմանը: Նախատեսվում էր նաև բոլոր խոշորացված համայնքներում և հինգ քաղաքներում կառավարման տեղեկատվական համակարգերի ներդրում և արդեն 2018 թվականին բոլոր պետական մարմիններում ներդրված համակարգերի միասնական մուտքի և նույնականացման համակարգի անցում[13]:

ՀՀ կառավարության հաջորդ 2017-2022 թվականների ծրագրում նշվում էր, որ ՀՀ կառավարությունը ակտիվորեն սկսել է պետական կառավարման համակարգի օպտիմալացման և աշխատանքի մեթոդների փոփոխության ուղղությամբ աշխատանքների իրականացումը, և դա առաջիկա հինգ տարիների գերակայությունն էր: Նոր ծրագրով գլխավոր գերակայություն էր սահմանվել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի արդիականացումը՝ դարձնելով դրանք ավելի ճկուն, արդյունավետ, նվազ ծախսատար և մարդակենտրոն:

ՀՀ կառավարության մեկ այլ գերակայություն էր պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի թվայնացումը, էլեկտրոնային կառավարման զարգացումն ու էլեկտրոնային եղանակով մատուցվող ծառայությունների խթանումը: Այս համատեքստում նախատեսվում էր դեռևս 2016 թվականի ծրագրով ներդրված պետական ծառայությունների մատուցման միասնական հարթակների համակարգի զարգացում՝ ներդնելով լրացուցիչ ծառայություններ և էապես ավելացնելով միասնական հարթակների քանակն ու հասանելիությունը: Իրականացված բարեփոխումների արդյունքում նախատեսվում էր գործարկել նաև «մեկ պատուհանի» սկզբունքով մատուցվող ծառայությունների համակարգը: 2018-2020 թվականների ընթացքում նախատեսվում էին լիարժեք գործարկել նախարարությունների «թեժ գիծ» ծառայության միասնական էլեկտրոնային հարթակը, ստեղծել քաղաքացիների կողմից պետական մարմիններին ուղղված հարցումների միասնական էլեկտրոնային հարթակ, մշակել և ներդնել պետական կառավարման էլեկտրոնային ինտեգրված համակարգ[14]:

Կարևոր ենք համարում անդրադառնալ նաև 2018 թվականին տեղի ունեցած հեղափոխությունից հետո, արդեն նոր ձևավորված կառավարության ծրագրով նախատեսված հանրային կառավարման ոլորտի բարեփոխումներին:

Այսպես՝ ՀՀ նոր կառավարության 2018 թվականի ծրագրով որպես գլխավոր առաջնահերթություն սահմանվում է կոռուպցիայի դեմ պայքարը, որի շրջանակներում կարևորվում է հանրային ծառայության մեջ գտնվող անձանց գործունեության, գույքի և եկամուտների թափանցիկությունը: Այսինքն իրական հանրային վերահսկողությունը պետության առաջին դեմքերի, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված հանրային ծառայության մեջ գտնվող բոլոր անձանց նկատմամբ, նրանց կողմից կոռուպցիոն գործարքների մերժումը և դրանցում չներգրավվածությունը: Կարևորվում են նաև հանրային կառավարման, ֆինանսների և գնումների թափանցիկությունը և հաշվետվողականության ապահովումը այնպիսի էլեկտրոնային համակարգերի ներդրմամբ, որոնք կապահովեն պաշտոնյաների գործունեության, ինչպես նաև կառավարման մարմինների, օղակների և գործընթացների թափանցիկություն, տվյալների անփոխելիություն, միասնականություն և ավտոմատացում[15]:

ՀՀ կառավարության 2018 թ-ի ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցում նշվում է՝

- մշակվել և հանրային քննարկման է դրվել ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թթ. միջոցառումների ծրագրի նախագիծը: Ծրագրով առանձնապես կարևորվում է այնպիսի համակարգի ներդ-

րումը, որը կերաշխավորի պաշտոն զբաղեցնող անձանց և նրանց ընտանիքի անդամների ունեցվածքի վերաբերյալ տեղեկատվության անխոչընդոտ հասանելիությունը,

- *հանրային կառավարման, ֆինանսների և գնումների թափանցիկության և հաշվետվողականության ապահովման համար մեկնարկել են պետական ծախսերը կազմելու, պետական բյուջեն ձևավորելու գործընթացի ավտոմատացված համակարգ մշակելու և վերջինս պետական կառավարման համակարգում գործող ավտոմատացված այլ համակարգերի հետ ինտեգրելու՝ տեղեկատվության փոխանակման հնարավորություն ստեղծելու աշխատանքները,*
- *ընդլայնվել են նոտարական էլեկտրոնային համակարգի գործառույթները, ներդրվել է ՀՀ պետական մարմինների կողմից տրամադրվող պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական էլեկտրոնային համակարգ,*
- *փորձնական գործարկվել է էլեկտրոնային հարցումների միասնական կայքը, աշխատանքներ են տարվել ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանի ներդրման ուղղությամբ,*
- *մեկնարկել են նաև հանրագրերի էլեկտրոնային համակարգի, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի արդիականացման, սնանկության կառավարիչների էլեկտրոնային հարթակների ներդրման, դատարանների միասնական էլեկտրոնային հարթակի ներդրման աշխատանքները,*
- *արդարադատության նախարարության կողմից միջազգային փորձի ուսումնասիրության և տեխնիկական առաջադրանքների մշակման աշխատանքներ են իրականացվում՝ արդարադատության էլեկտրոնային միասնական համակարգի ներդրման ուղղությամբ: Գործարկվել է դատարանների և հարկադիր կատարում ապահովող ծառայության միջև օրենքով սահմանված փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով փոխանցելու համակարգը[16]:*

ՀՀ կառավարության ներկայիս 2019 թ-ի ծրագրի «Հանրային կառավարումը» ենթաբաժնում նշված է, որ պետական կառավարման ուռճացված համակարգը՝ իր տեսանելի և անտեսանելի մարմինների չարդարացված ծավալով, գործառույթների և ոլորտների կրկնողությամբ, դրա հետևանքով առաջացած անարդյունավետությամբ, պատասխանատվության մեխանիզմների անորոշությամբ, հիմնազուրկ բեռ է հարկ վճարողների համար և լրջագույն խոչընդոտ՝ Հայաստանի մրցունակության բարձրացման ճանապարհին: Ուստի պետք է ծախսարդյունավետ, դինամիկ, ճկուն և մրցունակ պետական կառավարման համակարգ, որի ուղղությամբ կառավարությունը շարունակաբար վեր է հանելու պետական բոլոր գերատեսչությունների կրկնվող գործառույթները, և վերջիններիս օպտիմալացման արդյունքում բարձրացվելու են պետական գերատեսչությունների ծախսարդյունավետությունը և աշխատանքի արդյունավետությունը:

Կատարողականի գնահատման համակարգի բարեփոխման արդյունքներով փոքրացվելու է պետական մեքենան՝ նպաստելով պետական ռեսուրսների ճիշտ կառավարմանը: Արդյունքում՝ կապահովվի կառավարության անդամների իրավասությունների և պարտականությունների հավասարակշռումը, ծրագրերի արդյունքների համար պատասխանատվության որոշակիացումը և այլն[17]: Մինչ օրս արված փոփոխությունները իրենց դրական արդյունքն են տալիս, և կարծում ենք, որ դրանք կկրեն շարունակական բնույթ՝ նպաստելով ՀՀ պետական կառավարման արդյունավետության բարձրացմանը:

ՀՀ հանրային կառավարման համակարգի բարեփոխումները չեն սահմանափակվում վերը նշված առաջնահերթություններով միայն: Դրանք բազմազան են և ընդգրկում են ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացվող բարեփոփոխումները, այլև այն բոլոր ծրագրերը և նորարարությունները, ո-

որոնք իրականացվում են տնտեսական, քաղաքական, սոցիալական, ռազմական, մշակութային միջազգային ոլորտներում: Այս ամենի նպատակը՝ ՀՀ պետական կառավարման ոլորտի արդյունավետության բարձրացումն է: Բարեփոխելով յուրաքանչյուր համակարգ՝ կարող ես ստեղծել առավել նպաստավոր կառավարման կառուցակարգեր, բավարարված հասարակություն, հստակ գործող կառավարման մարմիններ, որոնք էլ կարող են ապահովել առավել երկար և շարունակական կառավարում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ վարչապետի "ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների առաջնահերթ միջոցառումների մասին" 1999թ. Սեպտեմբերի 3-ի թիվ 544 որոշումը:
2. ՀՀ վարչապետի "ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների առաջնահերթ միջոցառումների ցանկը հաստատելու մասին" 2000թ. մարտի 31-ի թիվ 151 որոշումը:
3. "ՀՀ կառավարության 2008-2012թթ. Գործունեության միջոցառումների ծրագիր", հուլիսի 24-ի N878-Ն որոշում:
4. ՀՀ հանրային կառավարման համակարգի բարեփոխումների վերաբերյալ զեկույց//http://www.justice.am/storage/uploads/Ardir_1.pdf?fbclid=IwAR0PHYwxFo7BcW3zKECTwlsL4iao82AcXUnGuOx5Q3jIFPPOXgaXToF2HSg, էջ 10-23:
5. "ՀՀ կառավարության որոշումը ՀՀ կառավարության ծրագրի մասին" 2008թ.-ի ապրիլի 28-ի N 380-Ա որոշման 4-րդ կետ:
6. "Լավ կառավարման մոնիթորինգ և գնահատում" զեկույց, Երևան, 2016, էջ 34:
7. "ՀՀ կառավարության որոշումը կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին", 30.10.2008թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=51206:
8. "Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ", Երևան, 2014, էջ 26-35:
9. "Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր", 27.03.2014թ., http://www.gov.am/files/docs/1322.pdf:
10. "Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգ", Երևան, 2014, http://www.gov.am/ufiles/file/xorhurdner/korupcia/:
11. "ՀՀ կառավարության որոշումը ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին", 25.09.2015թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=100900:
12. "ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիր", http://www.mtad.am/files/docs/1477.pdf:
13. ՀՀ կառավարության ծրագիր, 18.10.2016 թ., N 1060 – Ա որոշում, https://www.gov.am/files/docs/1950.pdf:
14. ՀՀ կառավարության ծրագիր, 19.06.2017 թ., N 646 - Ա որոշում, https://www.gov.am/files/docs/2207.pdf:
15. ՀՀ կառավարության ծրագիր, 01.06.2018 թ., N 581 - Ա որոշում, https://www.gov.am/files/docs/2782.pdf:
16. ՀՀ կառավարության 2018 թ.-ի ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույց , 28.02.2019 թ., N 141- Ա որոշում, https://www.gov.am/files/docs/3188.pdf:
17. ՀՀ կառավարության ծրագիր, 08.02.2019 թ., N 65 – Ա որոշում, https://www.gov.am/files/docs/3133.pdf

РЕЗЮМЕ

Роль и значение реформ в системе государственного управления Республики Армения (РА)

Едгар Калантарян

Ключевые слова: система государственного управления, эффективное управление, реформы, управление, законодательство, государственная служба, антикоррупционное управление.

Как в постсоветских республиках, так и в Республике Армения (РА) распад Советского Союза привел к появлению нового, более современного метода государственного управления. Первоначально процесс был сложным и медленным, однако сегодня можно декларировать, что страны добились значительного прогресса в этой области. Система государственного управления в РА реформируется, улучшая системное функционирование. Основной целью этих реформ является повышение качества государственных услуг, предоставляемых органами государственного управления, что создает механизмы, которые послужат основой для модернизации и демократизации государственного управления РА.

SUMMARY

The Role and Significance of Reforms in the Governance System in the Republic of Armenia (RA)

Edgar Qalantaryan

Keywords: reforms of governance system, effective governance, reforms, governance, civil service, anticorruption governance.

The article discusses the problem of reforms in the system of governance in the Republic of Armenia (RA). Both in the post-soviet republics and in the RA the collapse of the Soviet Union led to the emergence of new, more modern methods in the governance system. The process was complicated. However, today it can be declared that countries have made significant progress in this area. The governance system in the RA is being reformed, particularly the functions. The main goal of these reforms is to improve the quality of public services provided by public bodies, which creates mechanisms that will serve as the basis for the modernization and democratization of governance system in the RA.